

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՓԵՂԵՐԱՏ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրիշտարնիս և բոլոր հրկրների, միացե՛ք.

ԲԱՆԻՈՐ ՀԱՅԿ

Հրամանատար Նրկաթէ Զօրագնդի

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

Գինը՝ 3 ղուր

58

ՀՐԱՅԱՐԱՊՈՒԹԻՒՆ

№ 31

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ

№ 31

ԾՈՏԿԻՆ—1919

355 (47)
Բ-27

1 MAR 2010

55(47)

7-27

46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՂՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարյան՝ը բոլոր երկրներին, մեացէ՛ր.

ԲԱՆԻՈՐ ՀԱՅԿ

Հրամանատար Երկաթէ Զօրադնդի

1006
29564

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

584 736

ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

№ 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՂՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

№ 27

ԾԱՌԱԿՈՒՄ — 1919

25 FEB 2014

40781

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.

Կարմիր զորաբանակի մասին զրականութիւն մենք զրեթէ չունինք: Հայ իրականութեան մէջ այժմ ևս տիրում է իշխում են այն ազգայնական հոռանքները, որոնք թէ՛ Կովկասում է թէ՛ Տաճկաստանում գործում են իմպերիալիզմի հրահանգներով համաձայն:

Այն զորամասերը, որոնք գործում են ներկայումս Կովկասում իրր թէ «յեղափոխական» զբօշի ներքոյ՝ իրապէս ներկայացնում են իրենցից համաշխարհային սպիտակ զորաբանակի փօքրիկ հաւաքածոները: Իսկ այն ղեկավարները, բոլոր այն «հերոսները» և «զորապետները», որոնք հռչակել են մեր հայրենի ազգայնականների կողմից հանդիսանում են միջազգային ռէակցիայի օպոստաւորները:

Սակայն այդիսի զրութիւնը չի կարող երկար տևել: Վաղ թէ ուշ մեր կեանքը պիտի յեղաշրջւի, հին կարգերը պիտի տապալեն և Կովկասում ևս պիտի հանդէս գայ այն խիզախ կարմիր զորաբանակը, որն այսօր այնքան ծանր պայմաններում, պայքար է մղում համաշխարհային իմպերիալիզմի դիշուսիչ վահանների դէմ:

Այդ բանակի սաղմերը պիտի կազմեն Կովկասի բանւորա-զիւղացիական տարրերն, իսկ ղեկավարները կարող են լինել նրանք, որոնք խորհրդային, բանւորա-զիւղացիական կարմիր Ռուսաստանում անցել են որոշ լեզափոխական դպրոց և մշակել են ռազմական որոշ փորձ:

Այդպիսի գործիչներից է այս դրքոյկի հեղինակը, ընկ. Հայկը, որն անցնալով կապւած է եղել պրոլետարական գեմոկրատիայի հետ, իսկ հոկտեմբերեան լեզափոխութիւնից լեռնային կապել է ամենասերտ կերպով Կարմիր պրոլետարական գունդերի հետ: Այն մոմենտին, երբ շատ—շատ ուսանողներ հին զօրքի ղեկավարները կուռւմ էին պրոլետարիատի դէմ, ընկ. Հայկը բուռն ոգեւորութեամբ գործում էր պրոլետարական զօրաբանակի շարքերում: Եւ հէնց այդտեղ էլ նա կիրառել է կուռի այն մեթոդներն, որոնք մշակել են մեր զօրաբանակի բարձրագոյն հրամանատարութեան կողմից:

Ընկ. Հայկը եղել է «սպիտակների» և չէթօւլովակների դէմ պայքարող զօրաբանակի առաջին շարքերում: Այդտեղ նա ինքը լինելով Երկաթէ Դիվիզիայի հրամանատար կառարել է ակտիւ դեր մեր արեւելեան զօրաբանակի մէջ:

Խորհրդային Հանրապետութեան կողմից նա ողջունւել է որպէս խիզախ մարտիկ և չ. Խորհրդների Գործադիր Կոմիտէի որոշմամբ ոտացել է

«Կարմիր Աստղ» պատուաւոր օրդէնը: Ներկայումս նա Հանրապետութեան Ռէվիզէնսովէտի որոշմամբ նշտնակւած է Կովկասեան Կարմիր Դիվիզիայի ճամնատար: Այս մերկ տեղեկութիւնները չեն կարող, իհարկէ, աւել ըն. Հայկի ամբողջական կենդանադիրը: Սակայն մեր բերւած փոստերից երեւում է, որ նա մեր կենանքի և իրականութեան լեղաշրջման տրտալայտութիւններից մէկն է:

Եւ որպէս այդպիսին «Նաչդիվ Գայեան», որպէս առւանել են նրան Սամարայի բանւորները, հին Կովկասեան նոցիօնալիստ զօրապետների հանդէպ ներկայացնում է հակադիր մի պատկեր: Լինելով մեծ պրոլետարական, միշտ զգայնական, կարմիր զօրաբանակի ասպետ նա կուռւած է խմբիւրդնդհանուր կոմմունիստական դրօշի շուրջը կովկասեան աշխատաւորութեան լաւագոյն տարրերը: Եւ Կարմիր Կովկասեան դիվիզեան մեծ և խիզախ կարմիր բանակի հետ միասին պիտի նպաստէ Կովկասեան հակալեզափոխութեան և այդ հակալեզափոխութեան հիմնական ողնաշարի՝ Դէնիկինեան բանակի տապալմանը:

Այս դրքոյկն, որը գրել է մեր խնդրի համաձայն ըն. Հայկը ներկայացնում է իրենից համառօտ մի ուղեցոյց Կովկասի կարմիր մարտիկների համար: Նրանք որոնք ուսէրենին չեն տիրապետում, կարող են այս բրօշի ընդհանրութեամբ ծանօթանալ

մեր Կարմիր բանակի էութեան, նպատակների և կազմակերպութեան հետ:

Բրօշիւրը հետաքրքրական է այն կողմից, որ ներկայացնում է ոչ թե գրական - թէօրիական աշխատանքի արդիւնք, այլ պրակտիքական մի ձեռնարկ՝ զբաղւած ռազմի գործին և պրակտական Կարմիր զօրաբանակին մօտ կանգնած գործիչի ձեռքով:

Այդ հանգամանքները իրաւունք են ապրիս մեզ հաստատելու, որ ԵԿարմիր բանակը՝ զրօշկը՝ կռաւնայ Կովկասեան ապագայ Կարմիր զօրաբանակի մէջ գործող հայ զինուորների անհրաժեշտ ձեռա-տեսը:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ

I. Կարմիր զօրաբանակի կազմութիւնը

Լայնածաւալ Ռուսաստանի կառավարչական դէկը բանւորութեան ձեռքն ընկնելուց յետոյ, Խորհրդային Իշխանութեան համար հրամայողական պահանջ դարձաւ յեղափոխութիւնը ամրապնդելու և ընդլայնելու անսակէտից՝ ստեղծել սեփական ռազմիկ ուժ:

Լինելով սկզբունքներով հակառակ բուրժուական միլիտարիզմին և առհասարակ հանոնաւոր, պարտադիր զօրակոչին, այնուամենայնիւ բանւորութեան շահերի իսկական պաշտպանները չէին կարող զանց առնել զինւած ուժի անհրաժեշտութիւնը — կաճաւորական հողի վրայ:

Չնայած ռազմիկ ուժ կազմելու դէս էին մի շարք սոցիալիստական կուսակցութիւններ և նոյն իսկ մի քանի կոմմունիստ ջնկերներ — գերադասելով ողջ ժողովրդի զինաւորումը — այնուամենայնիւ լրջա-միտ ու հեռաւեւ քաղաքականութիւնը չազմող և պարտիզանա-

կան խմբերն ու Կարմիր զվարդիան, զուտ կամաւորական հողի վրայ:

Բանւորութիւնը ի զէն հրաւիրող մեր ձայնը — ինչպէս հրեղէն կայծ ծաւալեց Ռուսիայի մի ծայրից միւսը և կտրծ ժամանակում իւրաքանչիւր բանւորական կենտրոնում կազմեցին Կարմիր զվարդիայի խմբեր ու զնդեր՝ թէ տեղական և թէ հոսսակցական տնուկներով:

Սկզբնական շրջանում ահա այս զնդերի վրայ լինւելով ընդհանրապէս Խորհրդային Իշխանութիւնը, իսկ մասնաւորապէս տեղական խորհուրդները՝ սկսեցին կեանքի մէջ կիրառել պրոլետարիատի դիկտատուրան և մեր պահանջները:

Ճիշտ է, Կարմիր զվարդիան որպէս նախնական, դեռևս ոչ կազմակերպւած զրական ոյժ — չուներ ներկայիս Կարմիր զօրաբանակի առաւելութիւնները, նոյնիսկ շատ թերի ու բացասական կողմերով էր օժտւած — այնուամենայնիւ Խորհրդային Իշխանութեան դեկրետները և թէ տեղական իշխանութեան ամրապնդումն եղել են շնորհիւ Կարմիր զւարդիայի — և այդ վերջ ի վերջոյ եղաւ ներկայ Կարմիր զօրաբանակի հիմքը:

Իհարկէ, մեզ, կոմմունիստներին համար ոչ զվարդիան և ոչ էլ ժամանակակից կարմիր զօրաբանակը նպատակ չէին կազմում, այլ միջոց մեր նպատակներին հասնելու, այլապէս մենք չէինք

կարող նպաստել հին ցարական զօրքի քայքայմանը:

Ցարիզմի հողով տնւած հին զօրքը չէր կարող պաշտպանել մեր շահերը և ոչ էլ միջոց հանդիսանալ մեր նպատակներին հասնելու: Այդ հասկանալի էր մեզ:

Նւ եթէ կային ընկերներ կամ հոսանքներ, որոնք անհեռատեսութեամբ մեզ մեղադրում էին հին ռազմիկ ու ու մարզւած զօրքը քայքայելու և նորը ստեղծելու մէջ՝ — նրանք չարաչար սխալւում էին, և իրերի յետագայ զարգացումը կարծում էմ, ապացուցեցին այդ: 15 միլիոնանոց փայտի ոյժով հաւաքած, աստծոյ ու ցարի անունով երզւեցրած ու սնած, զաւազանային դիսցիպլինային ենթարկւած ու չորսամեայ իմպերիալիստական սպանդանոցից բոլորովին լոգնած զզւած զօրքը — չէր կարող Խորհրդային Իշխանութեան նեցուկը լինել և ոչ էլ բանւորութեան շահերը պաշտպանել: Նա պիտի քայքայէր անպայման — արպեսդի մոխրակոյտի տակից առկաթող նոր ոյժերը — ստեղծէին մեր, բանւորական դասակարգային զօրքը — Կարմիր զօրքը:

Ո՛ւմ շահերն էր պաշտպանում հին զօրքը — Պառասխանելով այս հարցին՝ մեզ համար պարզ կլինի, թէ ինչո՞ւ էր անհրաժեշտ բանւորագիւղացիական Կարմիր բանակի կազմութիւնը:

Ցարական զօրքը կազմւած լինելով բացառապէս պարտադիր զօրակոչի միջոցով դարձել էր

դասակարգային հզօր զէնք շահագործող կասապի ձեռքում: Տարիներ շարունակ գեներալներն ու հոգեւորականները մտքով էին առւս գինւորների դանդաղ տի, թէ նա սհայրենիքի, ցարի ու հաւատի» պաշտպանն է, թէ՛ պարտաւոր է անմռանէ զոհել իր կեանքը այդ երբսրդութեան համար: Վերսիշեալ բառերի մէջ պարփակուած էր պնակալից հոգեւորականի, հողատէր գործարանատէրերի շահը: Հայրենիք խօսքը մի պառնէշ, մի շիրմա էր ագէտ զինւորի դասակարգային գիտակցութիւնը մթազնելու համար, իսկ ցար առելով զինւորը հասկանաւ էր աստծոյ փոխանորդն երկրում, որը անսխալական է, ամենակալ և որին պարտաւոր են բոլորը հնազանդւել—քանզի այլպէս է ցանկանում ու պահանջում աստուծոն ու հաւատը:

Ինչո՞ւ, պատճառը, ո՞ր օրէնքի հիման վրայ բանւորներից ու զիւղացիներից կազմւած զօրքը պիտի ծառայէր ու զօհէր «ցարին ու հայրենիքին»։ այդ հարցնող չկար, որովհետեւ զօրքը պարտաւոր էր քաղաքականութիւնից, կուտակցութիւններից հեռու լինել ու նմանօրինակ հարցերով չզբաղել:

Բուրժուազիան դարեր շարունակ սաթալեւական օրէնքներով ստեղծել էր զօրքի համար մի շրջադիմ—օրից զէնք զինւորն իրաւունք չունէր անցնելու:

Այս պայմաններում մարդւած զօրքը, իհարկէ,

պիտի անէր այն, ինչ որ հրամայում էին: Իր արեւածը պաշտպանելով տիրող կալւածատէրերի լայնածաւալ անտառները, հրադանագարի անելով բմբոսաբանւորութեանը, հաց ու հոգ պահանջող զիւղացիութեանը—ցարական զինւորը կարծում էր թէ պաշտպանում է հայրենիքը: Կուրքէն հպատակելով գեներալներին—ճնշելով ազատագրական ամեն մի շարժում ու խօսք—զինւորը կօյր գործիք էր տիրող դասակարգերի համար՝ հէնց իր շահերի գէմ: Իսկ ո՞վ էր հրամայում հին զօրքին, ո՞ր դասից էին գեներալներն ու պնակալ զօրապետները, ո՞ր դասի առանձնաշնորհու՞մն էր կազեառական իւնկերական և այլ զինւորական գաղութներ մտնելը: Իհարկէ ոչ բանւորութիւնը և ոչ էլ զիւղացիութիւնն իրաւունք չունէին օգտուել այդ առանձնաշնորհու՞մներից, որոնք վերապահւած էին աղնականութեանը և իշխանազունների զաւակներին:

Ահա թէ ինչպէս էր կազմւած ցարական զօրքը և ո՞ւմն էր պաշտպանում նա ուրիշներով: Կարո՞ղ էր արգէօք Խորհրդային Իշխանութիւնը հիմնել այդ այժի վրայ: Ո՛չ:

Բոլորին լաւ լայանի է, որ Խորհրդային Իշխանութեան հաստատումից չեաւ, բոլոր հակապետական հոսանքները, հարուստ կալւածատէրերից սկսած մինչև զինւորականներն ու չինովնիկները—հոգեւորականութեան բաբձր դասի հետ միասին:

— Էկարոզանալով հաշտել «Այլ չի աշխատում նա չի կարող ուտել» մեր վեհ լոզունգի հետ՝ լեղապատառ փախան մի մասը Սիրիո, Դոն, իսկ միւս մասը արտասահման՝ ներկայիս Խորհրդային Իշխանութեան դէմ սկսած արշաւանքը կազմակերպելու համար:

Զրիակերութեան սովոր տուած փոքրեր անշուշտ չեն կարող մարսել պրոլետարիատի ծանր ապտակը և ահա մութ անկիւններում Խորհրդային Իշխանութեան դէմ արշաւանք կազմակերպեցին— հողերից զրկւած կալաժատէրք, ոսկէ ուսապիրները կորցրած գէներալները, գործարանները սոցիալիզացիայի ենթարկւած բուրժուազիան ու խարեւոյութիւններով զինւած հոգևորականները:

Այդ սեահողիները մտնելով միշտզգային իմպերիալիստների թեւերի տակ, շնորհիւ մի շարք պատճառների և չեխ-սլաւոնական զորքի ապստամբութեան, շատ շուտով իրանց ձեռքը ձգեցին հացաշատ Սիրիոյի և ու հանքառատ Դոնը, որին շուտով միացաւ հեռաւոր հիւսիսը՝ Արեւմտեան Նահանգը որը վաղուց էր գրաւել իր անսպառ անտառներով ու փայտի հարստութեամբ— միշտզգային իմպերիալիստների ախորժակը:

Սկսեց մի հզօր ճակատամարտ երկու հակառակորդ զսպակարգերի միջև: Նորածին Խորհրդային Իշխանութեանը, որպէս կղզիացած օսպիս բուրժու-

ազական անապատում, սպառնում էր սոսկալի վտանգ: Իսկ շարունակ բանւորութեան լաւագոյն զաւակների ալ-արեւմբ ձեռք բերւած ազատութիւնը կանգնած էր անդունդի եզրին: Բանւորութիւնը, նրա իսկական շահերի պաշտպան կոմմունիստական կուսակցութիւնը հրապարակ նետուեց իր ամբողջ հոլթեամբ:

Մեզ համար պարզ էր, որ բուրժուազական Եւրոպան չէր կարող հաշտ աչքով նայել Ռուսիայի սոցիալական լեղափոխութեան, նոր կեանքի նոր փայլին, քանի որ այդ փայլը, վաղ թէ ուշ, մի օր պիտի բանար եւրոպական բանւորութեան աչքը և բռնապետների զահերը պիտի փլուզէին այնպէս, ինչպէս փլուց նիկոլայ զահինը:

Մենք գիտէինք, որ «սիրելի» սօխզնիկները լայն կերպով օգնում են ուսու հակալեղափոխութեանը՝ թէ զէնքով, թէ դրամով և թէ նոյն իսկ զօրքով: Բայց ի՞նչ անել— ահա մի հարց, որ հրապարակի վրայ էր իր ամբողջ մերկութեամբ: Զիչել անկարելի էր, հաշտել բուրժուազիայի հետ՝ առաւել էս: Մնում էր մի ելք՝ կռւել ու պատուով մեռնել:

Անհրաժեշտ էր կազմակերպւած, մարդւած ոյժերի դէմ զուրս բերել աւելի ամուր, աւելի արի ոյժ— զուտ զաւակարգային բանւորական ոյժ: Կարմիր զփարդիան շնորհիւ իր անկազմակեր-

պաւթեան, փոքր քանակին ու զուտ բանւորական
կազմին, բնական է չէր կարող պատկա-
ռելի պատենէշ լինել հակադատութեան հաւժեւ
հոսանքին, մանաւազ երբ այդ հոսանքները սնոււմ,
նպաստուում էին միջազգային իմպերիալիզմից:

Այս բոլորը նկատի առնելով Խորհրդային
Իշխանութիւնը ստիպւած դէնքի կանչեց բան-
ւորութեանն ու զիւզացիութեանը՝ շահագործւող
դասին— փրկելու մեր հանրապետութիւնը:

Եւ այդ ոյժը ստեղծւեց...

Ստեղծւեց նա, ճիշտ է, բազում ատնշանք-
ներով, լաւագոյն բնկերների ամիսների անխոնջ
աշխատանքի, նրանց անսպառ եռանդի շնորհիւ:

Այսօր, ստիպին, Ռուսաստանի պրոլետարիատը
կարող է պարծենալ իր շնորհալի մարդւած զօրքով,
նրա փառաւոր յաղթութիւններով և յուսալ, որ
Կարմիր զօրաբանակը, չեղափոխութեան Կարմիր
դրոշակը ձեռքին, որպէս անաստան և տնայարանի
ապառաժ, հօր ոյժ, կանգնած է յաղթանդամ ու
նրա կրծքի վրայ մէկը միւսի ետևից փշուում են
անօդակաւ հակայնդափոխական ու իմբերիալի-
ստական բոլոր հոսանքները...

Թէ ի՞նչպէս է կազմւած մեր փայփայած Կար-
միր զօրաբանակը, ինչ զեր է կառուրել և ինչ
պիտի անի ապագայում, զրան կանցնենք մենք այժմ:

II. Կարմիր զօրաբանակի կազմութիւնը.

Անցեալ զլիսում մենք տեսցինք, թէ ինչպէ-
կազմւեց Կարմիր զօրաբանակը. այս անգամ մենք
կանգ կառնենք այդ բանակի ներքին կազմի օրդի-
նութեան և էութեան վրայ:

Կարմիր զօրաբանակը նախ որպէս զօրք, մար-
տիկ ոյժ, տարբերւում է հին ցարական զօրքից
իր դասակարգային բնավորութեամբ, այսինքն՝ Կար-
միր զօրաբանակը նախ՝ չեղափոխական-սոցիալիս-
տական (Կարմիր) զօրք է, երկրորդ՝ այդ զօրքի
ստեղծման պատճառները եղել են չեղափոխութեան
պաշտպանութիւնն ու սոցիալիզմի կիրառումը՝
Երրորդ, զօրքը կառմւած է բնկերական հողի վրայ
և չունի իր մէջ դասակարգային առանձնաշնոր-
հումներ և իրաւունքներ, չօրքօրդ՝ ներքին կազմը
և էութիւնը հիմնւած է սոցիալիստական աշխար-
հայեցողութեան վրայ և հինգերորդ՝ Կարմիր
զինւորը հաւասար ու լիազօր քաղաքացի է Խոր-
հրդային իշխանութեան մէջ, առանց սահմանափա-
կումների կամ առանձնաշնորհումների:

Պարզենք մեր ասելիքը:

Կարմիր զօրքը չեղափոխական-սոցիալիստական
զօրք է, որովհետեւ բացի այն, որ նա իմպերիալիս-
տական նպատակներ չունի՝ նա զէնքի դժով չեղա-
յրջւմ է բուրժուազական հասարակարգն ու ստեղ-

ծուծ սոցիալիստական միջավայր: Կարմիր զորքը բանւորութեան ու գիւղացիութեան սպառազինւած համախմբումն է, նրա մէջ ալլատարը էլէմէնտներ համարեա թէ չկան և համաձայն Խորհրդային իշխանութեան 1918 թ. յունւար 15. դեկրետի՝ Կարմիր զորքի մէջ ընդունւում են ուրիշ քրտինքով չապրող, յուեկեալ արժէք չստացող բանւորութեան ու գիւղացիութեան շահագործող դասը: Եւ հէնց դրա համար էլ Կարմիր զորաբանակը կոչւում է բանւոր-գիւղացիական: Եթէ երբեք, պատահմամբ, Կարմիր զորքի մէջ ընկնում են ոչ բանւոր կամ գիւղացի էլէմէնտներ՝ գիւղական կուլակներ, բուրժուաների զաւակներ (ոչ սոցիալիստ), այդ պիտի բացատրել զինւորական կոմիսարների (տեսուչ) անհեռատեսութեամբ և կամ դեկրետի մասին անժանօթ լինելով: Այնուամենայնիւ այդ բացառիկ դէպքերը չեն փոխում զորքի էութիւնը:

Կարմիր զորաբանակն ինքը գինւած ժողովուրդն է, և որպէս այդպիսին նա կիրառւում է պրոլետարիատի ու չքաւոր գիւղացիութեան դիկտատուրան, տարածում է սոցիալիզմը, համայնացնում է հողը և հզօր պատնէշ է հանդիսանում հակադեմոկրատիական ռոմանովիստների դէմ:

Կարմիր զորքի 90% պարզորոշ հասկանում ու գիտակցում է, թէ ինչո՞ւ և ու՞մ համար է

կուում, ի՞նչ են իր պարտականութիւնները և ո՞րն է իր նպատակը: Կողիտ, փայտի ոյժը, մահւան վախը կամ զօռով կռիւ բշեղու քաղաքականութիւնը բացակայում է Կարմիր զորքի շարքերում: Նա գնում է պաշտպանելու յեղափոխութիւնն ու ազատութիւնը՝ գիտակցաբար ու կամովին:

Ճիշտ է, Կարմիր զորքը սկզբնական շրջանում, գլխաւորապէս կամաւորական բնոյթ ունէր, և կազմւած էր բացառապէս յեղափոխական բանւորութիւնից, բայց յետագայում Խորհրդային իշխանութիւնն ստիպւած եղաւ զինակից յայտարարել, և մենք տեսնում ենք՝ գիւղացիութեան խոշոր մասը յօժարութեամբ է ղէնքի տակ մտնում պաշտպանելու համար իր «հողն ու ազատութիւնը»: Միայն կարծիք է այն, որ Կարմիր զորաբանակը հին ցարական զորքի վերակազմումն է, նրա կերպարանափոխումը: Բոլոր մանր և թէ մեծ զօրամասերում այժմ գոյութիւն ունեն կոմմունիստական եաջէջկաներ, առանձին կուսակցական խմբակներ, որոշ ծրագրով ու դործիակերպով: Զօրախմբեր ու պօլկեր կան, որոնց 90 տոկոսը կամ ամբողջովին կոմմունիստներ են:

Զօրքերի շարքերում աշխատում են կուսակցութեան ամենալաւագոյն ընկերները՝ հին, փոր-

ձևած, տոկոսն, յեղափոխական մարտիկներ, սրոնք
զօրքի հոգին ու միտքն են: Իւրաքանչիւր պօլի և
շիվիզիա ունի իր յեղափոխական ներկայացուցիչը,
կուսակցութեան արտայայտիչները՝ կոմիսարներ:
Բոլոր ցածր հրամանատարական պաշտօնները տա-
նում են կուսակցական ընկերները:

Իւրաքանչիւր օր միլիօնաւոր օրինակներով
սպառում է յատկապէս զօրքի համար պատրաստւած
կուսակցական գրականութիւնը: Իւրաքանչիւր զօրա-
խորհուրդ կամ շաբաթ ունի իր քաղաքական բաժան-
մունքը, որտեղ պաշտօնավարում են զուտ կուսակ-
ցական ընկերներ՝ տանելով կուսակցական-քաղաքա-
կան անգնահատելի աշխատանք: Իւրաքանչիւր վաշտ
(բօտա) հարիւրեակ, պօլի կամ շիվիզիա ունի իր
ընկերական դատարանները՝ ընտրողական քառան-
գամ սիստեմով:

Եւ օր զլիսաւորն է՝ Կարմիր զօրքի մէջ բացա-
կայում է նաչալնիկի, հրամանատարի լիազօր, բո-
վանդակ կամքը բոլոր հարցերում: Կարմիր զօրաբա-
նակը ղեկավարւում ու կռոււմարւում է ոչ թէ մի
անձնաւորութեան, մի հրամանատարի կամքով, այլ
կօլէգիալ յեղափոխական խորհուրդներով: Այս խոր
հուրդների մէջ դերերը և նոյն իսկ իրաւունքներն
ու պարականութիւնները բաժանւում են որոշ յա-
տուկ օրէնքների համաձայն: Կարմիր զօրքի մէջ

ով ինչ ուղեց, նա չի կարող անել, այդ գործելա-
կերպն ու անձնական քմահաճօյքները՝ ցարական
դէներալներին մէջ միայն գոյութիւն ունէին: Ահա
թէ ինչու մեր Կարմիր զօրաբանակը հին զօրքի վե-
րակազմութեամբ տիպը չէ, այլ ուրոյն, յեղափոխական
ժամտեսակի ու պահանջների տեղադրութեամբ:

Կարմիր զօրաբանակը արգասիք է հանրային
զինավարժութեան սկզբունքի: Մենք, որպէս կոմ-
մունիստներ կողմնակից ենք աշխատաւոր ժողո-
վրդի պարտադիր զինավարժութեան, մենք չենք
առում, որ ամբողջ ազգը, բայց դասակարգերը պար-
տաւոր են զինավարժել: Ո՛չ, այդ մեր սկզբունքից
դուրս է, այդ սկզբունքիւնը հին ցարական զօրքի
էութիւնն էր: Մենք պահանջում ենք ու կողմնա-
կից ենք զինել ու զինավարժել ազգի միայն չքաւոր,
բանւոր ու աշխատաւոր դասին, զէնքը պիտի
դառնա ոչ թէ շահագործողի, այլ շահագործ-
ւողի ձեռքին, այլապէս հանրային զինավարժու-
թիւնը ապագա սակարկային բնօթ կստանայ: Քա-
ղաքացիական կռւի մէջ մեր յաղթութեան դրաւա-
կանը՝ զէնքը բանւորի ձեռքում լինելն է, այլապէս
Կարմիր զօրաբանակը դասակարգային բնօթ չի կա-
րող կրել:

Ճիշտ է, արդի Կարմիր զօրաբանակի կազմու-
թիւնն ու էութիւնը բացարձակ ու մշտնջենական

ծշմարտութիւն չեն կազմում մեզ համար, անշուշտ ժամանակի հետ զուգնրթացաբար կփոխւեն նաև զօրքի կազմակերպչական ձևերը, այնուամենայնիւ ներկայիս մեր զինւորական քաղաքականութիւնը ամենաճիշտ ուղին է, որը տարւած է տյնքան հմտօրէն ու հետեօդակեմօրէն:

Կարմիր զօրաբանակը իր սկզբնական կազմաշրջանում ունէր բազմաթիւ թերութիւններ նոյնիսկ հակասութիւններ, բայց մի տարւալ փօրձը մեզ ցօյց տւեց, թէ որոնք էին այդ պահաս կօզմերը և թէ ինչ էր մեզ պակասում:

Կարմիր զօրաբանակի կազմութեան համար անհրաժեշտ էր ապարատ, մեխանիզմ: Նին ցարական մեխանիզմը՝ զօրակոչութեան ատեանները, փոյինակի նաչալնիկների բաժանմունքները՝ ցարիզմի հետ փրւելուց յետօյ—հրամայօդական պահանջ դարձաւ կազմելու նօր ապարատ՝ նօր հիմունքներով խիստ, կենդրօնացման սկզբունքով: Շնօրհիւ բնկ. Տրօցկու եռանդուն շանքերի, շատ շուտով կազմւեց ռազմական գօրծերի կօմիսարիատն իր գլխաւօրութեամբ: Ամբողջ սօցիալիստական Ռուսաստանը բաժանւեց խիստ ու ձևած գաւառական, նախանգալին ու շրջանօյին կօմիսարիատների՝ դարձեալ կօլլէգիալ իշխանութեամբ: Իւրաքանչիւր կօմիսարիատի կառավարումը յանձնւեց երեք անձնաւօրութեան:

Թիւնից բաղկացած մի խօրհրդի, որը կազմում են զինւորական տեսուչը (Военком) և երկու օգնականները (Военруки): Առանց վերօյիշեալ ապարատի մենք Կարմիր զօրաբանակ ունենալ չէինք կարօղ:

Զօրաբանակ կազմելը բարդ ու խրթին ձեռնարկութիւն է, որի համար անհրաժեշտ են երեք գլխաւօր հիմունքներ, 1) զօրակօչ, 2) սառարաժանում—մարզանք, և 3) պարենաւօրութն ու բաշխութն: Առանց կազմակերպւած ապարատի Խօրհրդային իշխանութեան զօրակօչի յայտարարումը կը մնար անիրականալի, և հենց դրա համար էլ Կարմիր զօրաբանակ ստեղծելուց առաջ՝ ստեղծւեց նրա կազմակերպիչ գասակարգային մեխանիզմը՝ զինւորական կօմիսարիատը, որը մի շարք դառն փօրձերից յետօյ, հետգհեաէ էլ աւելի ու աւելի է կանօնաւօրութւում ու կազմակերպւում: Զօրաբանակ կազմելու համար անհրաժեշտ էր նօյնպէս ստեղծել պարտականութիւնների և իրաւունքների ծրագիր, զինւորական օրսշ օրէնքներ ու կանօններ:

Ինչպէս առանց այլ ու բենի գրել կարգալչի կարելի, նմանապէս էլ առանց չափւած ձևւած օրէնքների կռւել ու մարդուել անկարելի է:

Նին ցարական զօրքը ունէր իր բազմատեսակ ուստաւունքն ու կանօնադրերը, բայց այդ բօլօրը

մեզ համար քիչ բացառութեամբ, օտար ու անցանկալի էին: Հին զինւորական օրէնքների հիմնական էութիւնը «ցարի, հայրենիքի ու հաւատի» պաշտպանութիւնն էր: Բոլոր ռազմական կանոնադրերը ցարիզմի ողով էին խմբադրւած, դրանց մէջ զինւորը ներկայացւած էր նախ որպէս անհոգի, անմոռնչ էակ, որը պարտաւոր էր կատարել հրամանատարների կամքը, և երկրորդ, որ մի ժայռից մինչև միւսը զրւած էր շովինիստական, աշխարհական ու ազադասակարգային շահերի տեսակէտից, որոնց վրայ լինւած ռազմիկ զինւորը պատրաստ էր պաշտպանել «կամօքն տստուծոյ թաղաւորող» բռնակալներին:

Մենք դուրս արինք բոլոր փառած ու հին հասկացողութիւնները այդ ծրագրներից, էերպարանափոխեցինք ռազմի էութիւնը, զինւորի հոգին, նպատակները, ու վերցնելով հին ծրագրներից կաղծակերպչական օգտակար մասերը՝ ստեղծեցինք նոր, թաւրմ և բոպէի պահանջներին համապատասխան զինւորական ծրագրեր ու կանոնադրեր: Խորհրդային իշխանութիւնը արդէն հաստատել է ու հրատարակել մի շարք զինւորական կանոնադրեր, ինչպէս օրինակ՝ դաշտային, ներքին, գարնիզօնային և կարգապահական, որոնց մէջ կարմիր թելի պէս անց է կացւած և իւրաքանչիւր նախադասութեան

մէջ շեշտուած է, որ զինւորը աշխատաւոր բանւոր զինդպու զաւակն է. նա դէնքի է կանչւել պաշտպանելու սոցիալական յեղափոխութիւնը և պրոլետարիատի զիկտատեւրան, որ նա հաւասար, համադոր քաղաքացի է սոցիալիստական հայրենիքի և որպէս այդպիսին՝ պարտաւոր է յարգել աշխատանքը, պատւել բանւորի իրաւունքները և զոհել սոցիալական յեղափոխութեան համար:

Ահա մեր ծրագրերը, և պարզ է, որ այդ հոգով ճշուող, մարդուղ զինւած բանւորը բուրժուալիայի շահերը չի կարող պաշտպանել կամ իմպերիալիզմին զոհ չի դառնալ:

Բարձր է կարմիր զինւորի նշանակութիւնը որպէս ազատութեան պաշտպանի, որպէս համաշխարհային պրոլետարիատի իրաւունքների ռահիլիրայի, բայց աւելի ևս բարձր է նրա պարտականութիւններն ու պատասխանատւութիւնը հանդէպ Ռուսաստանի սոցիալիստական ռամկավարութեան:

Եւ հէնց այդ տեսակէտից էլ կարմիր, զինւորից պահանջուած է խիստ կարգապահութիւն, բարձր վեհանձնութիւն և անձնական մեծ զոհաբերութիւն յօդուտ ընդհանուրի:

Նոր ծրագրի մէջ տեղ չունեն հին զինւորութեան քմահաճօյքներն և առանձնաշնորհութիւնները, խիստ պարտականութիւնների հետ միաժամանակ

Կարմիր զինւորը կամ Կարմիր հրամանատարը պատասխանատու են իրենց ամեն մի քալի համար հանրապետութեան ազատ դատարանների առաջ հաւասարապէս: Սեղափոխական ազատամիտ օրէնքները զինւորականի գործողութիւնները դատապարտելիս նրանց չեն բաժանում գեներալների և հասարակ զինւորի, իրաւատէրերի և իրաւազուրկների, ո՛չ, սոցիալիստական Կարմիր զօրքի մէջ պաշտօնների տարբերութիւնը, պատասխանատուութիւնից բացի ոչ մի արտօնութիւն չէ տալիս: Պրոլետարիատի արդարացի օրէնքները համազօր չափով են դատում և պատժում մեղադրւող զինւորականին:

Ահա թէ ինչպէս է կազմւած մեր Կարմիր զօրարանակը, որակը բոլորը իրաւունքների մէջ հաւասար են ու պատասխանատու:

Կարմիր զօրարանակի երկաթէ զօրազնդերը չեն միայն որ տանում են մեզ դէպի յաղթութիւն, այլ յեղափոխական պարտականութիւնների դիտակցութիւնն ու կռուող պրոլետարիատի նախազգացմունքն է տալիս մեզ ոյժ, եռանդ, հաւատ վերջնականապէս ջնջելու կապիտալի լուծը...

III. Բարձրագոյն զինւորական կազմը

Ընդհանուր գծերով մենք արդէն պարզեցինք, թէ ինչ՞մ և ինչպէս կազմւեց արդի հզօր մօտ

2, 000, 000-ի հասնող մեր Կարմիր զօրարանակը, որն իր մի տարւայ անցեալով փայլուն յաղթութիւններով ազագուցեց միլիտարիստական աշխարհին՝ որ պրոլետարիատի ստեղծագործիչ ոյժը անպառ է ու անսասան:

Այս անգամ ես համառօտակի կանգ կառնեմ Կարմիր բանակի բարձրագոյն զինւորական հրամանատարական կազմի և իր ստորաբաժանումների վրայ, որովհետեւ այդ կազմը միակ ռազմական կազմակերպութիւնն է իր բացառիկ օրէնքներով աշխարհի զինւորական զօգմաների մէջ: Մենք արդէն շեշտեցինք, որ պատերազմը, կռիւը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ Խորոզ, իշխող դուսակարգի քաղաքականութիւնը... Նրբ անզօր են դրիչն ու թանաքը—խօսում են թնդանօթները,—ահա պատերազմի էութիւնը: Ռազմագիտութիւնը պարփակում է իր մէջ զիտութեան, արհեստի, արւեստի բոլոր երեւոյթները, բայց այնուամենայնիւ, մինչ ցարդ, ոչ մի հռչակուոր զօրապետ կամ զիտական վերջնականապէս չի կարողացել որոշել թէ, ի՞նչ է վերջապէս զօրավարութիւնը—ռազմագիտութիւն, արհեստ, արւեստ, զիտութիւն, բնատուր տաղանդ թէ՛ բնդունակութիւն: Ինչ անուն էլ տալու լինինք զօրավարութեան զիտութեանը, այնուամենայնիւ փաստ է՝ որ ռազմագիտութիւնը և նրա հիմքերը

ենթակայ են մշտնջենական փոփոխութեան, կերպարանափոխութեան և եփօլիւցիայի։ Ռազմազինութիւնն իւրաքանչիւր դասակարգի ձեռքում ձեակերպւում, փոփոխւում է համաձայն տիրող դասի շահերի պահանջների։ Զօրավարութեան կազմակերպութեան ձեւերը հին դարում այլ էր, իսկ նոր դարում բոլորովին այլ։ Իւրաքանչիւր տիրող դաս տւել է այդ զինութեան իր հոգերանութեան ցայտումները։ Մի էութիւն միայն մնացել է նախադարեան շրջաններից, մարդկութեան ստեղծագործութիւնից սկսած անասան—ռազմազինութեան մէջ, այդ զինւած մարդու կամքն է, որը հանդիսանում է ռազմի յաջողութեան գրաւականը։ Պրօլետարիատը ևս նման միւս դասերի (աւատական, բուրժուազական և այլն) իր ձեռքն առնելով իշխանութեան ղեկը, իր ինքնուրոյն իդէալներն ու ձեւերն է մտցնում—հասարակական բոլոր զինութիւնների հետ միասին, ռազմազինութեան մէջ։

Հսկածքերեան լեղափոխութիւնից յետոյ, Ռուսաստանում տիրող բուրժուազական զինւորագիտութեան (Военная доктрина) հիմքերը օստանւեց, իսկ Կարմիր բանակի ստեղծման օրից սկսած, հիմք ստացաւ նոր, պրօլետարական ռազմազինութիւնը, իր առանձնայատուկ ձեւերով ու օրէնքներով։

Իւրաքանչիւր զօրաբանակի, կամ սպառազինւած ոյժի դրական կողմերը, նրա կենսունակութիւնը, նպատակներն ու իդէները որոշելու համար, պիտի ծանօթանալ նրա զլխաւոր հրամանատարական կազմի, էութեան, օրէնքների, կազմակերպական ձեւերին, օգուեն,—այլապէս նկարագրւող զօրքի պատկերը կը դառնայ թիւը և անկատար։ Եւ հէնց այդ տեսակէտից էլ մենք ցանկանում ենք շեշտել, որ աշխարհի մէջ գոյութիւն ունեցող բոլոր զօրակազմութիւնների մէջ, մեր Կարմիր բանակը և իր բարձրագոյն հրամանատարական երարխիան, բացառիկ դէպք են կազմում։ Նախքան թաց յօդաւածում մենք արդեն ասել ենք, որ Կարմիր զօրաբանակը տարւում է ոչ թէ անհատական, այլ կոլեզիալ մարմիններով, լեղափոխական թորհուրդներով։

Մենք կանդ կառնենք այդ խորհրդների վրայ։ Սօցիալիստական խորհրդների իշխանութեան մէջ, զինւորական ռազմազինական ամենաժայռագոյն ատեանը, մարմինը Անդրիտանում է հանրապարութեան զինւորական-լեղափոխական խորհուրդը, (Революционный Военный Совет Республики), բաղկացած եօթը հին, փորձւած լեղափոխական անդամներից և զերագոյն զլխաւոր հրամանատարից։ Վերոյիշեալ խորհուրդը հան-

զիսանուժ է բոլանդակ Ռուսաստանի ռազմական ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, որոշ չափաւժ. ձեւով իրաւունքներով ու պարտականութիւններով: Համառուսական Կենտրոնական-զործադիր մարմնի 1918 թ. սեպտեմբերի 2-ի որոշման համաձայն, զինւորական-չեղափոխական խորհրդի տրամադրութեան տակ է դրւում երկրի բոլանդակ ուժերը և միջոցները — հանրապետութեան սահմանները պաշտպանելու համար: Հ. Զ. Յ. Խորհրդին են ենթարկւում և նրա տւած գիրեկտիւվներով են զործում բոլոր թէ՛ ռազմադաշտի և թէ՛ երկրի թիկունքային զինւորական հիմնարկութիւնները, որոնք բաժանւում են հետեւեալ կարգերի՝

1) Համառուսական գլխաւոր շտաբ (Всероссийский Главный штаб).

2) Կենտրոնական Մատակարար-Խորհուրդ (Центральное Управление Снабжения).

3) Ռազմական-Օրէնսդրական Խորհուրդ (Военно-Законодательный Совет).

4) Բարձրագոյն Զինւորական Ինսպեկցիայ (Высшая Военн. Инспекция).

5) Կենտրոնական Խորհուրդ-Զինւորական-Հաղորդակցութիւնների (Центральн. Управл. Военн. Собщ.).

6) Զինւորական Կոմիսարների համառուսա-

կան բիւրօ (Всеросс. бюро Военн. Комиссаров).

7) Զինւորական-Յեղափոխական Դատարան (Военно-Революц. Трибунал).

8) Ընդհանուր զործերի վարչութիւն (Управление Общ. Делами).

Ահա գլխաւորապէս այն մարմինները, որոնք հանդիսանում են Կարմիր Զորաբանակի բաղադրութիւնը ու ղեկավարող խ/մանը: Նախ քան վերոյիշեալ մարմինների էութեանն անցնելը անհրաժեշտ է յիշել, որ համաձայն մշակւած կանոնադրի, հանրապետութեան զինւորական բոլոր ուժերի զերագոյն հրամանատարը մասնակցում է Հ. Զ. Յ. Խորհրդի մէջ: Վեճակների ձայնով, և որը պիտի ունենայ զինւորական անցեալ և որոշ ստաժ մանաւանդ քաղաքացիական կուում:

Զինւորական-Յեղափոխական Խորհրդի նախագահը հանդիսանում է հանրապետութեան զինւորական նախարարը (Ռազմական և Ծովային զործերի կոմիսարը): Նախագահը, որպէս Ժողովրդական կոմիսար, հաստատւում է նախագահական պաշտօնում միայն Համառուսական Կենտրոնական զործադիր մարմնի կողմից, իսկ միւս անդամները, նոյնպէս և գլխաւոր հրամանատարը նշանակւում ու հաստատւում են Ժողովրդական Կոմիսարների կող-

միջ: Ն. 2. 3. Խորհրդի անդամները ու նախագահի փոխարարներու թիւնը որոշւած է առանձին յօդւածով, համաձայն որի նախագահը իրաւունք ունի, անկախ ու միակամ, հարկ եղած դէպքում իր որոշումները տալ բոլոր այն հարցերի վերաբերմամբ, որոնք վերապահւած են խորհրդա-ժողովին,— բաց իր անկախ որոշումները պարտաւոր է յայտնել Խորհրդին: Եթէ Խորհուրդը դէմ է նախագահի տւած անկախ որոշումներին— յայտնում է այդ առթիւ իր բողոքը Ժողովրդական Կոմիսարներին կամ Կենտրոնական-գործադիր մարմին: Նոյն իրաւունքն ունի բողոքելու խորհրդի իւրաքանչիւր անդամը:

Բացի զուտ ռազմական-զինւորական նշանակութիւն ունեցող հաջցերից, որոնց լուծումը վերապահւած է գլխաւոր հրամանատարին, մնացեալ բոլոր հարցերը, ինչպէս օրինակ, զինւորակոչը, նոր զօրաբանակների կազմելը, նրանց և դաշտային կռուող զօրքերի պարենաւորումը, ռազմամթերք մատակարարելու բարդ հարցերը, զանազան կազմակերպչական, օրէնսդրական ռազմական ծրագրերը, կանոնադրեր կազմելը և այլն պատկանում են Խորհրդի որոշման ու սանկցիային: Այդ հարցերի լուծման առթիւ Խորհուրդը ունենում է իր պարբերական Ժողովները և յատուկ հրամանադրերը, որոնք պարտադիր են ոչ թէ դաշտային դործող բանակ-

ների համար, այլև բոլոր Թիկունքային զինւորական մարմինների համար:

Խորհուրդն է ղեկավարում նոյնպէս Կարմիր զօրաբանակի քաղաքական, կուսակցական կրթութեան բարդ խնդիրը, Կոմսունիստական կուսակցութեան Կենտ. վարչութեան կողմից նշանակւած յատուկ-քաղաքական բաժանմունքների միջոցաւ (По ЛИТОТДЕЛ):

Խորհրդի բոլոր անդամները, բացի գլխաւոր հրամանատարից, բոլորն էլ կուսակցական ակախ գործիչներ են ու պատասխանատու իրանց գործունեութեանց մէջ ոչ միայն Ժողովրդական Կոմիսարների, այլ և կուսակցութեան Կենտրոնական վարչութեան առաջ: Գլխաւոր հրամանատարը կարող է կուսակցական լինել կամ ոչ, այդ իհարկէ ունի իր խոշոր նշանակութիւնը, բաց որովհետեւ, ղեռ ևս պատանի Կարմիր Զօրաբանակը հանդէս չի բերել իր ծայրից զուտ պրօլետարական շնորհայի, փորձած զօրապետներ, ուստի և ներկայիս գլխաւոր հրամանատարները գլխաւորապէս նշանակւում են հին, ցարական գեներալներից, որոնք աւելի լոյս զիրք են բռնել դէպի Խորհրդային Իշխանութիւնը և հպատակւում են պրօլետարական գիկտատուրային: Եւ ի նկատի ունենալով այդ բոլոր հրամանատարների հրամաններն ու կարգադրութիւնները, պէտք է

հաստատուեն նոյնպէս և հօմիսարի ստորագրութեամբ, առանց որի հրամանը ոյժ չի կարող ունենալ: Բայց այդ հարցի առթիւ մենք կը խօսենք յետագայում:

IV. Բարձրագոյն-զինւորական կազմը.

- 1) Համառուսական զլխաւոր շտաբ և Կարմիր ձեմարան (Красная Академия).

Համառուսական զլխաւոր շտաբը լինելով բարձրագոյն մարմին բոլոր զործող-գաշտային շտաբների նոյնպէս և թիկունքային կազմակերպւող զօրամասերի տոն և ուղղութիւն է տալիս այդ շտաբների զործողութիւններին և պարփակում է իր մէջ հասարակապետութեան ռազմական զործողութիւնների տւեալները: Գլխաւոր Շտաբը ունի իր մի շարք բաժանմունքներ և կը թիչ, կազմակերպիչ հիմնարկութիւնները: Ամենագլխաւոր տեղը բռնում է զլխաւոր շտաբի ձեմարանը կամ Կարմիր ձեմարանը: Կարմիր զօրաբանակի հղօրացման զօրաւիշդը, իր երկու տարւայ մատուց զործողութեամբ հանդիսանում է Կարմիր ձեմարանը, որը մատակարարել է մի շարք աչքի ընկնող զօրապետներ ու ռազմագէտներ:

Արդի Կարմիր ձեմարանը զանազանում է ցարական ձեմարանից երեք զլխաւոր պայմաններով, նախ ժամանակի էութեամբ, երկրորդ ունկնդիր-

ների, աշակերտների դասակարգային շերտաւորմամբ և երրորդ՝ դասատու պրօֆեսսորների տեսական ու գործնական պատրաստականութեամբ ու փորձաժառօքով: Ժամանակի էութիւնը թելադրել է Կարմիր ձեմարանի համաջ այնպիսի դասացուցակ ու ժրադիր, որը խստօրէն համապատասխանում է պրօլետարական դիկտատուրայի ոգուն, որպէսզի աչքի ընկնող, տաղանդաւոր բանւորութիւնը կարողանայ ձեռք բերել ռազմագիտական բարձր օրէնքների պաշարը:

Ահա այդ տեսակէտի հիման վերայ, 1918 թ. հոկտեմբերի 7-ին № 47 հրամանագրով Հանրապետութեան զինւորական-լեզափոխական խորհուրդը (Реввоенсовет Республики) հաստատեց հետեւեալ ծրագիրը:

1) Կարմիր ձեմարանը պարտաւոր է աւել ոչ միայն բարձրագոյն զինւորական դիտութիւններ այլ և ընդհանուր կըթութիւն, որպէսզի ձեմարանը աւարտող բանւորութիւնը պատրաստ լինի կենսաքի մէջ թէ ռազմականօրէն, թէ կուսակցականօրէն և թէ միջազգային բարձր հարցերի անսակէտից:

2) Բայցի ռազմագիտութիւնից, ձեմարանում պիտի դասուանուէն փիլիսոփայական, անտեսադիտական ու ընդհանուր կըթական գիտութիւններ:

3) ձեմարանում դասախօսում են հետեւեալ ա-

աւարկաները, ա) ռազմագիտութիւն, բ) ռազմափիլիսոփայութիւն, գ) բոլոր զօրամասերի և ընդհանուր ռազմական տակտիկա, դ) զինւորական հոգեբանութիւն, ե) զինարկեստի պատմութիւն, զ) համաշխարհային 1914—1918 թթ. պատերազմի պատմութիւն, է) գենշտաբի ծառայութիւն, ը) զինւորական աշխարհագրութիւն, թ) զինւորական վարչութիւն, ժ) զինւորական-ծովային գիտութիւն, ժա) զինւորական քարտեզագրութիւն, ժբ) զինւորականերկրաչափութիւն, ժգ) հրանօթագիտութիւն, ժդ) օդամթնիչների գիտութիւն, ժե) պետական իրաւունք, ժզ) միջազգային իրաւունք և քաղաքականութիւն, ժէ) տնտեսագիտութիւն, ժը) միջազգային տնտեսութիւն, ժթ) ազգերի դարգացման պատմութիւն, ի) հասարակապետութիւն, իա) լոգիկա և գիտական հետախուզութեան ձևերը, իբ) օտարերկրեաց լեզուներ և այլ գիտութիւններ:

Կարմիր զօրանձաբանի նշանակութիւնը շատ մեծ է ու տնդնահատելի, որովհետեւ Կարմիր բանակին անհրաժեշտ են կարմիր զօրապետներ, կարմիր լեզափոխական առաջնորդներ, կարմիր գնդապետներ...

2) Կենտրոնական մատակարար-խորհուրդ (ЦУС).

Մատակարար խորհրդի պարտականութիւնները որոշւած է № 414 հրամանագրով, համաձայն

որի Կարմիր բանակին անհրաժեշտ բոլոր մթերքները, զէնքերը, ուտելիքը, հագուստները հոգացուած են վերայիշեալ խորհրդի կողմից, որը բաղկացած է երեք անձնաւորութիւնից՝ զլխաւոր մատակարարողից և երկու կոմիսարներից:

Կենտրոնական խորհուրդը ղեկավարում է ութ վարչութիւններին.

1) Գլխաւոր հրանօթային վարչութիւն (Г. А. У.) որը մատակարարում է կարմիր բանակին ռազմամթերք-զէնքերի բոլոր տեսակները, հրանօթներ, զէնքեր, պուլկմիտներ, փամփուշտներ, ռումբեր և այլն: Բոլոր Ֆրոնտների և զօրաբանակների զօրամթերքների պարենաւորումը վերապահւած է զլխաւոր հրանօթային վարչութեան:

2) Գլխաւոր զինւորական-երկրաչափական վարչութիւն (Г. В. И. У.) որը մատակարարում է Կարմիր բանակին երկրաչափական, հաղորդակցական մթերքների բոլոր տեսակները, ժւտօմօրիւններ, մօտօցիկլետներ, ռազմասալներ, բահ, քլունդ և այլն:

3) Գլխաւոր-զինւորական-տնտեսական վարչութիւն (Главхозупр) որը մատակարարում է Կարմիր բանակին ուտելիք և խմելիք:

4) Գլխաւոր վարչութիւն զինւորական հանգերձների (Воензаг) որը մատակարարում է Կար-

ծիր բանակին զինւորական հագուստներ, ճերմակեղէն և այլն:

5) Օգալին Ֆլուտի գլխաւոր վարչութիւն (Гл. управ. Возд. фл.), որը մատակարարում է Կարմիր բանակին օդագարիկներ, տէրօպլաններ, օդանաւեր, օդաչուների խմբեր և այլն:

6) Զինւորական-սանիտարական գլխաւոր-վարչութիւն (Гл. Воен. Санит. Упр.), որը մատակարարում է Կարմիր բանակին բժշկական խմբեր, դեղօրայք, սանիտարական, ֆելդշերական պարագաներ և այլն:

7) Զինւորական-անասնաբուժական գլխաւոր վարչութիւն (Гл. воен. вет. Упр.), որը մատակարարում է Կարմիր բանակին ձիաբույժներ, անասնաբույժներ, դեղօրայք և այլն:

8) Զիւն մատակարարող գլխաւոր վարչութիւն (Гл. Уп. по ремонту армии), որը զնւում է զանազան շրջաններ ու մատակարարում է Կարմիր բանակին հեծելազօրքի ձիեր:

Բացի վերոյիշեալ ստորաբաժանումները կենտրոնական մատակարար խորհուրդն ունի մի շարք ուրիշ բաժանմունքներ ևս, որոնք նպաստում են Կարմիր բանակին, բայց որոնք երկրորդական նշանակութիւն ունեն: Զօրքի պարենաւորման գործը, ինչպէս մի քանի անգամ կրկնել եմ չափից դուրս խրթին,

բարդ ու դժւարին դործ է: Ահագին աշխատանք, դրամ և էներգիայ է հարկաւոր բանակին նպաստելու համար և զօրքի յաղթութեան դրաւականը 50 տոկոսով կախւած է լաւ պարենաւորման էութիւնից:

3) Ռազմական-Օրէնսդրական խորհուրդ.

Խորհուրդի գլխաւոր պարտականութիւնն է ստեղծել, հնարել ու հրատարակել ռազմական զրքեր, յօդաձևեր, զինւորական կանոնադրեր, ծրագրեր և այլ դրական աշխատանքներ, որպէսզի Կարմիր զօրաբանակը բացի դործնական փորձառութիւնից կարողանայ ձեռք բերել տեսական զինւորական տեսութիւններ ևս:

4) Բարձրագոյն Զինւորական ինսպեկցիա.

Վերոյիշեալ խորհուրդը հանդիսանում է Կարմիր-զօրաբանակի ամենաբարձրագոյն վերաքննիչ մարմինը, թէ դործող և թէ թիկունքի զօրաբանակներում ու շտաբներում: Վերոյիշեալ խորհուրդը քննում է զօրապետների և զօրախմբերի ռազմական պատրաստականութիւնը, նրանց ռազմագիտութեան չափը և իրաւունք ունի հարկ եղած գէպքում, փոխել կամ հեռացնել հրամանատարական կազմի անդամներին և նոյն իսկ դատի ենթարկել, իհարկէ յայտնելով այդ մասին հասարակապետութեան զին-

ւորական չեղափոխ. խորհրդին Բարձրագոյն զինւորական ինսպեկցիայի մէջ մտնում են ռազմագէտներ և բոլոր զօրքերի տակտիկային լուսատեղեակ զինւորականներ, ինչպէս օրինակ ինսպեկտորներ՝ հեծելազօրքի, հետիոտն զօրքերի, թնդանօթաձիւ վաշտերի, երկրաչափական-զօրքերի, մատակարարական, զօրակոչական և կազմակերպչական դիտութիւններ և այլն: Կարմիր զօրքանակում նկատուող բոլոր թերութիւնները և բացառութիւնները զինւորական ինսպեկցիայի կողմից զեկուցւում են զինւորական-չեղափոխական խորհրդին, որը իր կարգին միջոցներ է ձեռք առնում թերութիւնները վերացնելու:

5) Զինւորական-Հաղորդակցութիւնների Կենտրոնական Խորհուրդ.

Որը բաղկացած է նոյնպէս երեք անձնաւորութիւններից՝ զինւորական ինժեներից և երկու կոմիսարներից: Այս խորհուրդը զեկավարում է հանրաժարութեան բոլոր զինւորական տեղափոխութիւնները, նախադրում է մանրամասն, համաձայն գլխաւոր շտաբի տւեալների, զօրախմբերի տեղափոխութիւնը, անհրաժեշտ զնացքների և քանակի ապահովելը: Բոլոր զինւորական-ռազմական զնացքները, նաեւ բոլոր զեկավարւում են խորհրդի հրամաններով և ուղղութեամբ: Առանց խորհրդի հրամանի

ոչ մի զինւորական զնացք, նաև կամ վազոն տեղափոխել անկաջելի է: Խորհրդին է ենթարկւում նոյնպէս բոլոր ռազմավիթական ճանապարհները, շօտեները և ուղիները:

6) Զինւորական-Կոմիսարների բիւրօ կամ կուսակցական գործերի բաժանմունք.

Այս խորհրդի վրայ պարտականութիւն է դրւած ուղղութիւն տալ և նախադիւրս բոլոր կոմիսարների, թէ գործող բանակի և թէ թիկունքի կազմակերպութիւնների, նահանգների, գաւառների, շրջանների մէջ աշխատող կուսակցական կոմիսարների գործունէութիւնը: Բացի այդ, բիւրօին է վերապահւած Կարմիր բանակին զբաղմունքութիւն և թերթերի մատակարարելու բարդ գործը: Զինւորական-քաղաքական կոնտր-հետախուզումը թէ հանրապետութեան սահմաններում և թէ Կարմիր զօրքարանակի մէջ կազմակերպում է վերոյիշեալ բիւրօն:

7) Զինւորական-չեղափոխական դատարան.

Կարմիր բանակի մէջ կառոււող բոլոր զինւորական զանցառութիւնները, յանցանքները, ոտնադործութիւնները և դաւաճանութիւնները քննւում ու դատւում են չեղափոխական դատարանի կողմից, որը կազմւած է մի նախագահից և երկու դատա-

ւորներէից: Յեղափոխական դատարանը ունի իւր ճիւղերը բոլոր զօրաճակատներում, զօրաբանակներում և զօրախմբերում: Նրա վճիռները անկապաւելի են, որոշումները արւում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Իշխանութեան անունից և իրականացւում 24 ժամաւ ընթացքում:

8) Ընդհանուր գործերի ղեկավար վարչութիւն.

Հանրապարութեան զինւորական-յեղափոխական խորհրդի բոլոր որոշումներն իրականացնելը, հաստատելը և ըստ պատկանելւոյն առաքելը վերապահւած է ընդհանուր գործերի տեսչութեան, առանց որի ստորագրութեան ոչ մի որոշում բաժանմունքները չի աւարկում: Զինւորական-յեղափոխական խորհրդի մատենադարանը, որոշումները և հրամանները զտնւում են գործերի տեսչութեան մօտ:

V. Հրամանատարական կազմ.

Մենք արդէն շեշտեցինք որ Կարմիր բանակի հրամանատարական կազմը, (երարխիան) տարբերւում է ցարական հրամանատարների կազմից թէ էութեամբ և թէ ձևերով: Ցարական կազմի մէջ հրամանատարի բովանդակ կամքը զինւորի համար ամենինչ էր, հրամանատարը ղեկավարում էր զինւորին

թէ պատերազմի դաշտում, թէ առօրեայ կեանքում թէ բարոյապէս և թէ մտաւորապէս: Իսկ այժմ այդ ղեկավարութեան իրաւունքները բաժանւած են: Հրամանատարը զօրապետ է ու հրամայող միայն կուի ժամանակ, պատերազմի դաշտում, կազմակերպչական և ռազմական խնդիրներում, թողնելով մնացեալ հոգսերի իրականացումը իր ընկեր կօմիսարին կամ զինւորական խորհրդի անդամներին: Կարմիր հրամանատարները և զօրապետները կարմիր զինւորի հաւաքար ընկերներն են, և նրա ղեկավարը կուի դաշտում—ուրիշ ոչինչ: Համաձայն խորհրդային հանրապետութեան դեկրետների կարմիր զօրաբանակի հրամանատարական ստորաբաժանումները հետեւեալներն են.

1) Գերագոյն հրամանատար (Главком).

Համաձայն 1918 թ. դեկտեմբերի 5-ի ժողովրդական կօմիսարների դեկրետի զլխաւոր կամ գերագոյն հրամանատարն ունի հետեւեալ իրաւունքներն ու պարտականութիւնները:

1) Խորհրդային Իշխանութեան գերագոյն հրամանատարը հանդիսանում է անմիջական ռազմական նաչալնիկը, հրամանատարը, խորհրդային Իշխանութեան մէջ գտնւող բոլոր ցամաքային և ծովային ռազմական ուժերի: Նրան են ենթարկւում, ռազմական բոլոր հարցերում բոլոր բերդերը և ամրու-

թիւնները: Այն զօրամասերը որոնք չեն դառնում գործող բանակում կամ թիկունքային բնակարան-թիւն ունեն հաւատակաւ են գերագոյն հրամանատարին այն չափով, որ չափով անհրաժեշտ կը գտնի այդ հանրապետութեան զինուորական-յեղափոխական խորհուրդը:

2) Գերագոյն հրամանատարը նշանակուած ու հաստատուած է իր պաշտօնի մէջ ժողովրդական կոմիսարներ խորհրդի կողմից: Գերագոյն հրամանատարը հանրապետութեան զինուորական-յեղափոխական խորհրդի մէջ է մտնում վեռողական ձայնով:

3) Հանրապետութեան Զ. Յ. խորհրդի նախագահի միջոցաւ բարձրագոյն իշխանութեան տւած զիջեկտիւնների համաձայն, գերագոյն հրամանատարին տրւում է լիակատար ազատութիւն անձամբ կարգադրելու բոլոր ռազմական և զինուորական բնօթ կրող բովանդակ հարցերը, նոյնպէս և լիակատար իրաւունք՝ նշանակելու, պաշտօնից զրկելու կամ տեղափոխելու հրամանատարական կազմի բոլոր անդամներին, զինուորական հիմնարկութիւնների և կազմակերպութիւնների բոլոր կառավարիչներին, որոնք պատկանում են գործող բանակին: Հանրապետութեան Զ. Յ. խորհրդին վերապահւած է իրաւունք հեռացնելու կամ պաշտօնից զրկելու հրամանատարու-

կան կազմից այն անհատներին, որոնց վերաբերմամբ այդ հարկ կը համարւի:

4) Զօրահակատների և բանակների նոյնպէս և նրանց շտաբների ղեկավարների ցանկը, կամ թեկնածութիւնը գերագոյն հրամանատարը պարտաւոր է ներկայացնել Հ. Զ. Յ. խորհրդի նախագահի հաստատման, իսկ մնացեալ բոլոր հրամանատարական կազմի նշանակումը կատարուած է գերագոյն հրամանատարի կարգադրութեամբ և կոմիսարի ստորագրութեամբ: Գերագոյն հրամանատարն իր բոլոր ռազմական գործողութիւնների մէջ հաւատակաւ է Զ. Յ. խորհրդին և պատասխանատու է խորհրդի նախագահի առաջ:

5) Ոչ մի հիմնարկութիւն կամ անձնակազմութիւն խորհրդային իշխանութեան մէջ բացի Զ. Յ. խորհրդից, ժողովրդական կոմիսարների խորհրդից և համառուական կենտրոնական կոմիտէից, իրաւունք չունի հրամաններ տալ գերագոյն հրամանատարին կամ հաշիւ պահանջել:

6) Գերագոյն հրամանատարն իր ռազմական հրամանները կարմիր բանակին տալիս է զօրահակառակ հրամանատարների միջոցաւ, իսկ հարկ եղած ղեկըւում ռազմական հրամայում է զօրաբանակների կամ զօրագնդերի հրամանատարներին:

7) Գերագոյն հրամանատարն իրաւունք ունի փոփոխել Կարմիր բանակի կազմը, կազմակերպել նոր զօրաբանակներ, հիմնարկութիւններ և ներկայացնել այդ Ձ. Խ. նախագահի հաստատման:

8) Գերագոյն հրամանատարը իրաւունք ունի փոփոխել զօրաճակատների շրջանները համաձայն ռազմական դրութեան:

2) Զօրաճակատի հրամանատար (Комфронт).

Իւրաքանչիւր զօրաճակատի (արևելեան, հարաւային և այլն) բարձրագոյն ղինւորական մարմինն է Զինւորական - Յեղափոխական խորհուրդը, որի մէջ վճռողական ձայնով մասնակցում է զօրաճակատի հրամանատարը: Այն բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները որոնք վերապահւած են զերագոյն հրամանատարին համառուսական չափով — վերաբերւում են նոյնպէս և զօրաճակատի հրամանատարին, բայց զօրաճակատի չափով: Զօրաճակատի հրամանատարը պատասխանատու է միայն զերագոյն հրամանատարի առաջ, որից և ստանում է ռազմական կարգադրութիւններ և հրամաններ:

3) Զօրաբանակի հրամանատար (Командарм).

Իւրաքանչիւր զօրաբանակի բարձրագոյն ղինւորական մարմինն է Ձ. Յ. խորհուրդը, որի մէջ է մտնում բանակի հրամանատարը վճռողական ձայնով:

Ձ. Յ. խորհուրդը ընտրւում և հաստատւում է հանրապետութեան Ձ. Յ. խորհրդի կողմից. անդամների թիւը 3 է: Բոլոր ռազմական խնդիրներում, նոյնպէս և ցածր հրամանատարական կազմի նշանակելու մէջ զօրաբանակի հրամանատարը պորձում է անկախ, իսկ փնայեալ բոլոր հարցերում օրպէս լիազօր անդամ Ձ. Յ. խորհրդի: Բոլոր ռազմական հրամանները ստանում է զօրաճակատի հրամանատարից և պատասխանատու է ռազմի հարցերում միայն նրա առաջ:

4) Զօրագնդի հրամանատար (Начальник дивизии).

Իւրաքանչիւր զօրագնդի մեծն է հրամանատարը և նրա կօմիսարը: Բոլոր ղինւորական, անտեսական և պատերազմական հարցերը ղեկավարում է հրամանատարը: Կոմիսարը խորհրդատու քնկերն է զօրագնդի հրամանատարի և նրա օդնականն ու կազմակերպիչը քաղաքական-կուլտուրական մարմինների: Կօմիսարը լեղափոխութեան և պրօլետարիատի ներկայացուցիչն է, որը անթարթ ու միշտ ուշադիր աչքերով հետևում է հրամանատարական գործունէութեանը: Բոլոր ռազմական հրամանները զօրագնդի հրամանատարը ստանում է զօրաբանակի հրամանատարից ու պատասխանատու է վերջինիս առաջ:

Կարմիր բանակի մնացեալ հրամանատարական կազմը բաղկացած է զորապետներից (коман. полка), խմբապետներից (командир батальиона), վաշտապետներից (команд. роты), յիսնապետներից (взв. командир), և տասնապետներից (отделенн. командир) որոնք բոլորն էլ աստիճանաբար ենթարկւում են բարձր զինւորական հրամանատարական կազմին:

Ինչ վերաբերւում է Կարմիր բանակի ներքին ռազմական կազմին, այդ մասին էր գրեթէ մի այլ անգամ բնդարձակ. կասենք միայն հետեւեալը, որ Կարմիր բանակի մէջ որպէս սկզբնական հիմք ռազմական ներքին կազմակերպութեան ընդունւած է եռեակ սխեման, այսինքն 3 տասնեակ զինւորներ կազմում են յիսնեակ (взвод.) երեք յիսնեակ՝ մի վաշտ (рота) երեք վաշտ՝ մի խումբ (батальион) երեք խումբ՝ մի պոլկ և այլն: Նորից կրկնում եմ՝ Կարմիր բանակն իր կազմակերպական ձևերով և օրէնքներով մեզ համար վերջնական ճշմարտութիւն չէ իհարկէ, բայց որպէս պրպետարական ստեղծագործիչ-զինւած ուժ, Կարմիր բանակը շատ սիրելի, զնահատելի և պատկառելի ուժ է այժմ մեզ, կոմունիստներն համար, մեր իդէալները իրականացնելու տեսակէտից:

ՀՀ Ազգային գրադարան



NL0217886

40.781